

ՏԵՂԵԿԱՆՔ

«2017թ. Ջրոսաշրջության մրցունակության զեկույցի» վերաբերյալ

Ջրոսաշրջության համաշխարհային մրցունակության զեկույցն առաջին անգամ տպագրվել է 2007թ-ի մարտի 1-ին Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից (ՀՏՖ): ՀՏՖ-ը երկրների զբոսաշրջության մրցունակությունը գնահատելու նպատակով մշակել է Ջրոսաշրջության մրցունակության համաթիվը: Այն բազմաչափ վերլուծություն է երկրի՝ որպես զբոսաշրջության կենտրոնի, համեմատական ուժեղ եւ թույլ կողմերը գնահատելու տեսանկյունից: Համաթվի հաշվարկման ժամանակ օգտագործվել են զբոսաշրջության ոլորտի ամենահամապարփակ տվյալների հենքերը՝ ինչպես «կոշտ տվյալներ» (WTTC; UNWTO), այնպես էլ հարցումների միջոցով ստացված տվյալներ: Ջեկույցի պատրաստման գործին աջակցում են գործընկեր կազմակերպությունները՝ Booz & Company, Deloitte, IATA, IUCN, UNWTO, WTTC, եւ գործընկեր ինստիտուտների (հետազոտական) համաշխարհային ցանցը: Հայաստանում ՀՏՖ-ի գործընկեր կազմակերպությունն է հանդիսանում «Տնտեսություն եւ արժեքներ» հետազոտական կենտրոնը:

Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից հրատարակվող Ջրոսաշրջության մրցունակության զեկույցում Ջրոսաշրջության մրցունակության համաթիվը, որը համակողմանիորեն գնահատում է երկրների մրցունակությունը զբոսաշրջության բնագավառում բաղկացած է ենթահամաթվերից, որոնք հաշվարկվում են 14 հեմասյունների գնահատականների հիման վրա:

Ստորև ներկայացվում է Ջրոսաշրջության մրցունակության 4 ենթահամաթվերը՝ իրենց համապատասխան համաթվերով:

Ենթահամաթիվ 1	
<i>Ջրոսաշրջությանն աջակցող միջավայր</i>	<ul style="list-style-type: none"> • Գործարար միջավայր • Ապահովություն եւ անվտանգություն • Սանիտարահիգիենիկ պայմաններ եւ առողջապահություն • Մարդկային ռեսուրսներ և աշխատաշուկա • ՏՀՏ պատրաստվածություն
Ենթահամաթիվ 2	
<i>Ջրոսաշրջության քաղաքականություն և աջակցող պայմաններ</i>	<ul style="list-style-type: none"> • Ջրոսաշրջությանն առաջնայնություն տալը • Միջազգային բացություն • Գնային մրցունակությունը զբոսաշրջության բնագավառում • Շրջակա միջավայրի կայունություն
Ենթահամաթիվ 3	

Զբոսաշրջության ենթակառուցվածքներ	<ul style="list-style-type: none"> • Օդային տրանսպորտի ենթակառուցվածք • Վերգետնյա տրանսպորտի ենթակառուցվածք • Սպասարկման ենթակառուցվածք
Ենթահամաթիվ 4	
Զբոսաշրջության մշակութային և բնական ռեսուրսներ	Բնական ռեսուրսներ Մշակութային ռեսուրսներ և գործարար ուղևորություն

Հայաստանի Հանրապետությունը արդեն 7-րդ տարին է, ինչ ներգրավվում է Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից հրապարակվող «Համաշխարհային զբոսաշրջության և ճամփորդության մրցունակության զեկույցում»:

Հայաստանն ըստ «2017թ. Զբոսաշրջության մրցունակության զեկույցի» զբոսաշրջության մրցունակությամբ 84-րդն է 136 երկրների շարքում, իսկ «2015թ. Զբոսաշրջության մրցունակության զեկույցի» զբոսաշրջության մրցունակությամբ 89-րդն է 141 երկրների շարքում:

Զբոսաշրջության ոլորտում աշխարհի ամենամրցունակ երկրների ցանկն այս տարի նույնպես գլխավորում են **Իսպանիան, Ֆրանսիան և Գերմանիան**:

ԱՊՀ երկրների խմբում զբոսաշրջության բնագավառում ամենամրցունակ երկիրը շարունակում է մնալ Ռուսաստանը (43-րդ տեղ)՝ բարելավելով իր դիրքերը 2015թ. նկատմամբ 2 տեղով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԻՐՔԸ՝ ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՀԱՄԵՍԱՏԱԾ

<i>Երկիր</i>	<i>Զբաղեցրած դիրքը 136 երկրների շարքում</i>	<i>Դիրքի փոփոխությունը 2015-2017 թթ.</i>
<i>ՌԴ</i>	<i>43</i>	<i>+2</i>
<i>Վրաստան</i>	<i>70</i>	<i>+1</i>
<i>Ադրբեջան</i>	<i>71</i>	<i>+13</i>
<i>Ղազախստան</i>	<i>81</i>	<i>+4</i>
<i>Հայաստան</i>	<i>84</i>	<i>+5</i>
<i>Տաջիկստան</i>	<i>107</i>	<i>+12</i>
<i>Դրոզստան</i>	<i>115</i>	<i>+1</i>
<i>Մոլդովա</i>	<i>117</i>	<i>-6</i>

Հայաստանի դիրքերը բարելավել են

- Ապահովություն եւ անվտանգություն
- Մարդկային ռեսուրսներ և աշխատաշուկա
- Ապահովություն և անվտանգություն
- Գործարար միջավայր
- Զբոսաշրջությանն առաջնայնություն տալը
- Զբոսաշրջիկների ներգրավմանն ուղղված մարքեթինգի արդյունավետություն
- Կառավարության ծախսերը տուրիզմի ոլորտում
- Գնային մրցունակությունը զբոսաշրջության բնագավառում